դերձելումն քանթէ անօրէնութեամբ նմանեցուցանելով զինքն անասնոյ անբանի և յարուցանելով նախատինս 'ի վերայ պատուոյն բանական բնութեան իւրոյ և դատապարտելով զինքն և հատանելով վճիռ իւր վարձ գործոյ անօրէնութեան իւրոյ 'ի գեհեն հրոյ, ուրեմն որքան հարկաւոր է մեզ և որքան բարութիւն 'ի վերայ մեր բերէ ընդունիլ Օրէնս այն որ մեզ բոլորեցունց հաջեսցի, և նոյն Օնինօք և սահմանաւն ելցէ հրաման 'ի մէնջ ձեռամբ հաւատարիմ ծառային ազգին մերմէ և Տեառնէ մերոյ, զի նա ինքն մնալով իբրև գառն անմեղ սուր 'ի ձեռին պահպանութեամբ և հուր առաջի նորայ զի կիզելով մաքրեսցէ անօրէնս և սրով կոտորեսցէ թշնամին ընդ դէմ արդարութեան ըստ Օրինօք մերովք, և ամենայն բնակիչք աշխարհին մերոյ կամաւ ընդունելութեամբ յանձն առնուն վարձ գործոց ձեռաց իւրոց թէ կեանս պատուականս և թէ մահ նախատանօք փոխանակ գործոյ անօրէնութեան իւրեանց ոչ 'ի յառնէ 'ի հրամանաւ ինքնակամ յիշխանէ և ոչ 'ի սպանօղէ՝ եթէ ոչ միայնակ 'ի ձեռանէ իւրմէ հատեալ վճռէ Օրինաց իւրոց, զի սովաւ փրծանի ամենայն իշխանք և դաւաճանութեանէ և նոքայ ամրափակեալ մնան 'ի ներս խորին կրծից սրտից բոլոր ժողովրդեան պահպանեալ կատարեալ սիրով և հնազանդութեամբ։